

# ԵՐԳ

## ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԱՇՏԱՄԱՆ ԳԻՇԵՐՈՅ

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր:

Բխեսցեն սիրտք մեր զբան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո ի մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր:

Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք, և ես զարթեալց առաւօտուց. ալէլուիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. ալէլուիա:

Զարթի՛ք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:

Զարթի՛ք, փրկեալք արեամբ, և տուք զփառս փրկողին. ալէլուիա:

Զարթի՛ք, նոր ժողովուրդք՝ նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա:

Զարթուցեալքս ի զբաղմանէ գիշերային հանգստենէ:

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր միսիթարութիւն և ի սփոփանս եկեղեցւոյ:

Անիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ գտցուք ի Քրիստոսէ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն: